ԺԱՆ ԲՈԴՐԻՅԱՐԻ «ՍԻՄՈՒԼՅԱԿՐԸ» ԵՎ ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՅԻ «MEDZ YEGHERN»-Ը
Մաս Բ. *«le Mai 1968»*[1]

Արա Մարջանյան[*]

2.5. Բոդրիյարը և շարժումը. 1968 թվականն աշխարհում և Ֆրանսիայում

«1968-ի մայիսը վերադարձել է: Եկել է պահը»:
«*Գրավիր Ուոլ-սթրիթը*» շարժման
կարգախոս, 2011թ. հոկտեմբերին[2]

«Հույս ունեմ, որ մեր «Մայիսի 15» շարժումը կմիանա նմանատիպ շարժումներին ողջ աշխարհում և կտապալի վերջապես կեղեքման վրա հիմնված այս համակարգը»:
Իսպանական «Մայիսի 15» շարժման
ակտիվիստի հարցազրույցը «*Եվրոնյուս*»
ընկերությանը, 17 նոյեմբերի, 2011թ.

"Доста!" յմարհ! «Սկսելա» …
Վերջին տարիների կարգախոս Բելգրադում,
Կիևում, Թբիլիսիում, Երևանում…

«Коммунисты мальчишку поймали,
потащили его в КГБ,
Ты откройся кто дал тебе книгу -
“Руководство в подпольной борьбе”».
Б.Г.

---

[1] Սկիզբը՝ «21-րդ ԴԱՐ», #1 , 2012թ.:

[*] «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, Հայաստանում ՄԱԿ ԶԾ էներգետիկայի և տրանսպորտի գծով ազգային փորձագետ, տ.գ.թ., ավագ գիտաշխատող:

[2] Այստեղ և ստորև բոլոր թարգմանությունները մերն են– *Ա.Մ.*

1968 թվականը, երբ հրատարակվեց Բոդրիյարի 1960թ. ատենախոսական աշխատանքը, բախտորոշ տարի էր Ֆրանսիայի համար: Այն անհանգիստ տարի էր նաև ողջ աշխարհում՝ լեցուն կարևոր իրադարձություններով[1]: Բոդրիյարին նվիրված բազում աշխատություններում, ուր սովորաբար բերվում է նաև 60-ականների նկարագիրը, դրանք շատ դեպքերում լուսաբանվում են միակողմանի: Ուշադրությունն այստեղ հիմնականում բևեռվում է Արևմուտքի վրա, իսկ դիտարկումները սահմանափակվում են Վիետնամական պատերազմի և ռասայական խտրականությունների դեմ բողոքների ակցիաներով, ուսանողական շարժումով, ռադիկալ արվեստի դաշտում ընթացող գործընթացներով, «սեքսուալ հեղափոխության» այս կամ այն դրսևորումներով: Այսինքն՝ կարևոր, գունեղ, բայց բոլորվին էլ ոչ համակարգային նշանակության ասպեկտների վրա:

Իսկ, այ, տեկտոնիկ մասշտաբի ԽՍՀՄ-Չինաստան հակամարտության գոյացմանը, *խունվեյբինների* երիտասարդական շարժման, մառիստական խմբավորումների գլոբալ գործունեության քննությանը հերթը շատ դեպքերում պարզապես չի էլ հասնում: Մինչդեռ, այդ ժամանակ *իրական պատմությունը* (թող ների ինձ Բոդրիյարն այս բառակապակցությունն օգտագործելու համար) կերտվում էր ոչ թե Արևմուտքում, ինչպես հակված են մտածել քաղաքագետներից, մշակութաբաններից և կինոռեժիսորներից շատերը, այլ Արևելքում, «սինո-սովետական» բլոկի քայքայման, արաբա-իսրայելական հակամարտության, հնդկա-պակիստանյան ընդհարումների, «Պրահյան գարնան» գործընթացներում, կոմունիստական, մառիստական, տրոցկիստական, անարխիստական շարժումների ներսում, ինչպես նաև ԽՍՀՄ հանրապետություններում, առաջին հերթին՝ Հայաստանում, Վրաստանում և Բալթյան երկրներում ազգային ինքնագիտակցության զարթոնքով:

Բազմաշերտ և հակասական այս գործընթացները պայմանավորված էին գաղութային համակարգի քայքայմամբ, ազգային ինքնագիտակցության աճով՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ նախորդ տասնամյակի կապի-

[1] XX դարի 60-ականների կեսերի որոշ կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը բերում ենք սույն հոդվածի ինտերնետային տարբերակի *Հավելվածում* (ստորև հղումներում՝ Հավելված), http://noravank.am/arm/futuris/detail.php?ELEMENT_ID=6324#17_t

տալիստական և սոցիալիստական հասարակարգերի սոցիալ-գաղափարախոսական քննադատությամբ, նեոմարքսիստական ռադիկալ բնույթի աշխատությունների տարածմամբ ու քարոզմամբ, հեղափոխական արվեստի ներազդմամբ: Տարածաշրջանային հակամարտությունների և «լոկալ» պատերազմների ֆոնին ընթացող 1968 թվականն իր վայրիվերումներով՝ նշված գործընթացների և երկբևեռ աշխարհի գլոբալ հակամարտության յուրատեսակ ու դրամատիկ գագաթնակետն էր:

Էական նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Արևմուտքի և Արևելքի շատ երկրներում հասունացել էր երիտասարդների մի նոր սերունդ, որը ձևավորվել էր համեմատաբար կայուն ու բարեկեցիկ միջավայրում: Այս սերունդը պատրաստ էր «փոխել աշխարհը»՝ ինչ էլ դա նշանակեր կամ ինչ էլ արժենար[1]: Այս գործոններն ուժգնանում էին ԽՄԿԿ քաղբյուրոյի «արտասահմանյան բաժնի», ՊԱԿ, ինչպես նաև ԽՍՀՄ, ԱՄՆ, Չինաստանի, Իսրայելի և այլ երկրների կառույցների ու գաղտնի կազմակերպությունների գլոբալ համակարգային աշխատանքի հետևանքով: Միամտություն կլիներ կարծել, որ, օրինակ, ԽՄԿԿ քաղբյուրոյի արտասահմանյան բաժինն էր այն դիրիժորը, որը կուլիսների հետևից ղեկավարում էր 60-ականների այս բուռն գործընթացները: ԽՄԿԿ-ն չուներ ոչ այդքան հեղինակություն, մանավանդ՝ սիոնիստական, անարխիստական, մաոիստական և տրոցկիստական շրջանակներում, ոչ էլ բավարար կարողություն՝ իրոք գլոբալ մասշտաբի համակարգման համար: Բայց ուղղակի մանկամտություն կլիներ կարծել, որ այս ու այլ նմանատիպ կառույցները հետ էին քաշվել ծավալվող գործընթացներից ու դրանց լոկ դիտորդն էին հանդիսանում[2]:

1968թ. մայիսյան դեպքերը Ֆրանսիայում՝ «*le Mai 1968*»-ը, ըստ էության, նշյալ իրադարձությունների մեծ համայնապատկերի միայն մեկ,

[1] Զուր չէ, որ Փ.Էլրիխի «Բնակչության ռումբը» հանրահայտ գիրքը հրատարակվեց հենց 1968թ. (*Ehrlich, Paul,* The Population Bomb. Ballantine Books. 1968):

[2] Հատկանշական է, որ փոթորկալից 1968թ. վերջին՝ դեկտեմբերի 10-ին, ԽՄԿԿ Կենտկոմի հույժ գաղտնի որոշմամբ (ստորագրել էր անձամբ գլխավոր քարտուղար Լ.Բրեժնևը) հիմնվեց Սոցիալական կոնկրետ հետազոտությունների ինստիտուտը՝ հայտնի *ИКСИ*-ին: Սա ԽՍՀՄ, թերևս, առաջին (բայց ոչ վերջին) ապարդյուն քայլն էր՝ փորձելու հասկանալ 60-ականների կեսից աշխարհում ձևավորվող սոցիալական նոր իրավիճակը և կանխելու հետագա պայթյունավտանգ զարգացումները,
http://cdclv.unlv.edu/archives/Documents/iksi_establish.html

բայց բավական մասշտաբային դրվագն էին[1]: Այս դեպքերի ակունքում, ի թիվս այլոց, ընկած էին կապիտալիստական հասարակարգի նեոմարքսիստական-ֆրեյդյան և սոցիալական քննադատության ոգով պարուրված Ֆրանկֆուրտյան դպրոցի (Հորկհեյմեր, Ֆրոմ, Մարկուզե, Ադորնո, Հաբերմաս[2]), ինչպես նաև Լեֆևրի, Բարտի, Բոդրիյարի, Դեբորի, Սարտրի, Ֆուկոյի և այլոց աշխատությունների հրատարակումն ու տարածումը: Դրանք սերտվում էին ֆրանսիական ուսանողական, *գոշիստական*[3] շրջանակներում՝ առանց այդ էլ բորբոքված հակապատերազմական ագիտացիայով և համակված տրոցկիստ-անարխիստական ռոմանտիկ հեղափոխական ոգով: Ֆրանսիայում ուսանողական շարժման սկիզբն ակնառու դրսևորվեց Մարտի 22-ի շարժման տեսքով՝ ծնված հենց Նանտերի համալսարանում[4], ուր այդ ժամանակ դասավանդում էր *մեծ* Լեֆևրի օգնական՝ երիտասարդ դասախոս Ժ.Բոդրիյարը: Շարժման ռադիկալացման փուլը, յուրօրինակ «ռեզոնանսի» մեջ մտնելով Բեռլինում, Պրահայում, Շանհայում և Պեկինում ծավալվող իրադարձությունների հետ, սկսվում է մայիսի 2-ին[5] Փարիզում ծայր առած ցույցերից ու բողոքի ակցիաներից և ավարտվում մայիսի 10-ի «Բարիկադների գիշերով»: Այս փուլի հատկանշական գիծը պետք է համարել այն, որ չնայած բողոքի աղմկալի դրսևորումներին՝ դրանք ընդհանուր առմամբ պարփակված էին ուսանողական միջավայ-

[1] *«Le Mai 1968»* հիմնական իրադարձությունների համառոտ ժամանակագրությունը՝ Մարտի 22-ի շարժումից մինչև դը Գոլի հրաժարականը 1969-ին, բերում ենք սույն հոդվածի ինտերնետային տարբերակի *Հավելվածում:*

[2] «...և այլ ձախական թափթփուկները, գրամշիական կոնտրկուլտուրայի այս տեռորիստները», ինչպես ժամանակին սիրում էր ասել Փ.Բյուքենենն իրեն այդքան բնորոշ վճռականությամբ [16]: Մենք դեռ կհանդիպենք այս անուններին՝ Հայաստանում 90-ականների կեսերից մեր, այսպես կոչված, «ինքության ճգնաժամի» խնդրի քննությանը նվիրված հատվածում:

[3] *Gauchisme* – ֆրանսերեն «ձախ» բառից: 60-70-ականների ֆրանսիական ձախական ռադիկալ շրջանակների ընդհանրացած անվանումն է՝ հիմնականում բաղկացած անարխիստական և տրոցկիստական ուսանողական խմբավորումներից և կուսակցություններից:

[4] Նանտերն ամերիկյան «կամպուսային» տիպի համալսարանների օրինակով Ֆրանսիայում 1964թ. բացված առաջին համալսարանն էր: Տարածքային առումով այն մեկուսացված էր, քաղաքաշինական առումով՝ զատված բուն Փարիզից: Կարծում եմ՝ այս հանգամանքը, մյուսների կողքին, էական դերակատարում ունեցավ Մարտի 22-ի շարժման գոյացման վրա: Այս առումով երևանյան համալսարանների և ինստիտուտների քաղաքային տարածության և «հասարակության» մեջ «սուզվածության», հայկական ուսանողական (և համազգային) շարժման առանձնահատկությունների վրա այս հանգամանքի ազդեցության համեմատական վերլուծությունը՝ ուսանողական շարժումների պատմական լայն ֆոնին (ԱՊՀ, Եվրոպա, ԱՄՆ), դեռ արված չէ:

[5] 1968թ. մայիսի 1-ը՝ ֆրանսիական կոմկուսի և արհմիությունների այդ օրը, անցավ բավական խաղաղ:

ռում և տրոցկիստ-անարխիստական ու այլ մարգինալ շրջանակներում և դեռ արձագանք չէին գտել աշխատավորական լայն շերտերի դասում: Դեպքերի զարգացման կուլմինացիոն փուլը նշանավորվեց շարժմանը ֆրանսիական կոմունիստական կուսակցության միացումով, որից հետո բողոքի ակցիաներն ընդունեցին իրապես համազգային (նույնիսկ՝ միջազգային, տե՛ս *Հավելված*) բնույթ:

Այստեղ իսկ ուզում ենք ընդգծել հետևյալ, մեր կարծիքով՝ կարևոր եզրահանգումը, որը հաճախ վրիպում է այս հարցերին նվիրված վերջին տասնամյակում կատարված ուսումնասիրությունների ուշադրությունից: Ֆրանսիայում 1968թ. մայիսի դեպքերին այդ երկրի կոմկուսի ու արհմիությունների զանգվածային միջամտումն ու ուղղորդումը «*le Mai 1968*»-ի այն հիմնական հատկանշական գիծն է, որը հստակորեն տարանջատում է այս երևույթը թե՛ 60-ականներին ծավալված այլ գործընթացներից[1], թե՛ ներկայումս ընթացողներից (տե՛ս ստորև):

Կուլմինացիոն այս փուլում ձևավորվեց նաև իշխանությունների և ֆրանսիական արհմիությունների ու կոմկուսի միջև «գործարքն» այսպես կոչված «40-60-1000» բանաձևի շուրջ. այն է՝ 40-ժամյա աշխատանքային շաբաթ, թոշակի իրավունքը՝ 60 տարեկանից և 1000 ֆրանկ ամսական նվազագույն երաշխավորված աշխատավարձ, որին ի պատասխան՝ կոմունիստները և արհմիությունները պարտավորվում էին հետ կանչել մարդկանց փողոցներից: Ընդ որում, եթե արհմիությունների այսպիսի պրագմատիկ դիրքը հասկանալի և ընունելի էր «*le Mai 1968*» գաղափարական հայրերի, այդ թվում՝ նաև Բոդրիյարի համար (ի վերջո, արհմիությունները հենց դրա համար էլ ստեղծվել էին, որպեսզի պաշտպանեն աշխատավորների սոցիալ-տնտեսական իրավունքները), ապա այս գործարքին կոմունիստական կուսակցության մասնակցությունը, այսինքն՝ մի ուժի, որն իրեն ներկայացնում էր իբրև քաղաքական *հեղափոխական* ավանգարդ, խոր վիրավորանք և հիասթափություն առաջացրեց ռադիկալ մտավորականների և գոշիստական ուսանողության շրջանում: Նրանցից շատերը խոսում էին

[1] Մոտակա համադրելի երևույթը, թերևս, միայն Չինաստանում ընթացող «մշակութային հեղափոխությունն» էր «կրակ՝ դեպի շտաբները» Մաո Ցզե Դունի հայտնի կարգախոսի ներքո:

Ֆրանսիայում «կոմունիստների դավաճանության» մասին[1]:

Ֆրանսիայի Ազգային ասամբլեայի արտահերթ ընտրություններով, որի արդյունքում աջակողմյան, ազգայնական և Ֆրանսիայի նախագահ Շ. դը Գոլին սատարող *գոլիստական* ուժերը ջախջախիչ հաղթանակ տարան *գոշիստների* և կոմկուսի նկատմամբ, Ֆրանսիայում ավարտվում է *«le Mai 1968»*-ը: Վրա է հասնում յուրօրինակ ռեակցիայի ժամանակաշրջանը, որը մենք համարում ենք Ֆրանսիայում մայիսյան դեպքերի եզրափակիչ փուլ: Այդ ժամանակ Ֆրանսիայում, մի փոքր ավելի վաղ՝ ԱՄՆ-ում, մի փոքր ավելի ուշ՝ ողջ Արևմտյան Եվրոպայում, իսկ շատ ավելի ուշ՝ նախկին ԽՍՀՄ-ում, Արևելյան Եվրոպայում ու աշխարհում, *le Mai 1968*-ի հասարակությանը փոխարինելու է գալիս «սպառողական հասարակությունը», «լիության հասարակությունը», «ներկայացման հասարակությունը»: Գի Դեբորի դառը ձևակերպմամբ՝ «ներկայացումների հասարակության դեմ ընդվզումն ինքը դարձավ ներկայացում» [17] (տե՛ս նաև *Հավելվածը*):

Պատկերավոր ասած՝ 1968թ. փարիզյան փողոցների «40-60-1000» պահանջի իրականությանը, որն արդեն իսկ ենթարկված էր սիմուլյացիայի (իրական պահանջները շատ ավելի ռադիկալ էին, թեև չէին ձևակերպվել քաղաքական տեսանկյունից լակոնիկ և ընկալելի ձևով), փոխարինելու եկավ մի նոր իրականություն: «90-60-90» բանաձևի իրականությունը: Այն է՝ իր, *մոդել*, «տենչանքի սպրդող օբյեկտ» դարձած կանացի գայթակղիչ մարմնի համամասնությունը:

2.5.1. Բոդրիյարը և շարժումը

Բոդրիյարի վերաբերմունքը 1968թ. մայիսի դեպքերին առաջին հայացքից հակասական է: Իր հուշերի հատորներում այս իրադարձություններին նրա ներգրավվածության մասին դժվար է բովանդակալից ու սպառիչ անդրադարձ գտնել: Բազմաթիվ հարցազրույցներից մի քանիսում նա

[1] Սա կոմունիստական կուսակցությունների ոչ առաջին, ոչ վերջին, ոչ էլ ամենալուրջ դավաճանությունն էր, իհարկե: Բավական է հիշել միայն Գերմանիայում Ա.Հիտլերին իշխանության բերելու գործում ԽՍՀՄ և Գերմանիայի կոմունիստական կուսակցությունների ֆունկցիոներների և Կոմինտերնի գործակալների էական դերակատարումը: Կամ՝ ԽՍՀՄ փլուզման ժամանակ աշխատավոր դասին լքելը «վայրենի» կապիտալիզմի ծագող իրողությունների առջև: Կամ՝ հենց ԽՍՀՄ փլուզումն ինքնին: Արդյո՞ք այս դավաճանության գիտակցումն է պատճառը, որ Բոդրիյարն այդքան պահանջված է մերօրյա Ռուսաստանում:

նշում էր, որ «մասնակցել է շարժմանն առաջին՝ Մարտի 22-ի փուլում»: Այլ հարցազրույցներում նա պնդում էր, որ ոչ մի կապ չի ունեցել Ֆրանսիայում մայիսյան իրադարձությունների հետ:

Ինչպես և միշտ Բոդրիյարի պարագայում, այս հակասականությունը թվացյալ է: Իրականությունը, կարծում եմ, այն է, որ պրակտիկ տեսանկյունից Բոդրիյարը, իրոք, մասնակցություն չէր ունեցել 1968թ. իրադարձություններին այն կերպ, ինչպես դրանց մասնակցել էին, օրինակ, Ժ.Պ.Սարտրը, Ա.Լեֆևրը կամ Մ.Ֆուկոն (վերջինս նույնիսկ բարձրացել էր Սորբոնի բարիկադները՝ սեռական և այլ փոքրամասնությունների հետ միասին[1]): Նանտերի համալսարանում 1968թ. հունվարից մինչև ապրիլի վերջն ընթացող գործընթացներին նա մասնակցել էր զոնե միայն այնքանով, որ այդ ժամանակ դասավանդում էր այնտեղ ու բավական հայտնի դեմք էր գոշիստական ուսանողական շրջանակներում: «1968թ. մայիսի» պաստառներից և կարգախոսներից մի քանիսն ասես վերցված լինեին Բոդրիյարի «Իրերի համակարգը» գրքից կամ *«Utopie»* ամսագրում տպագրված նրա որոշ հոդվածներից[2]: Ուշագրավ է, սակայն, այն, որ Նանտերի ձախական ուսանողական շրջանակներում իր մասսայականությունն ինքը՝ Բոդրիյարը, իրեն այդքան բնորոշ սթափությամբ ու թախիծով պայմանավորում էր առավելապես նրանով, որ իր դասախոսություններում մեկնաբանում էր հանճարեղ[3] Գի Դեբորի (*Guy Debord*) աշխատությունները և *Սիտուացիոնիստների* մանիֆեստները [24] (տե՛ս նաև *Հավելվածում):*

Միևնույն ժամանակ, Բոդրիյարը խորապես հիասթափված էր և՛ ձախ ռադիկալ երիտասարդական շրջանակներից, որոնք թերացան իրոք քաղաքական, համակարգային հեղափոխական պահանջներ ձևավորել ու ըն-

[1] Արդյո՞ք դրա համար չէ Բոդրիյարի ավելի ուշ մի գրքի վերնագիրը երկիմաստորեն կոչ անում «մոռանալ Ֆուկոյին» (*Baudrillard, Jean. Oublier Foucault.* Galilée, Paris. 1977):

[2] «Օտարացնել օտարացումը», «համակարգն է ծառայում մարդուն, ոչ հակառակը», «մարդն, ով երևակայության պակաս ունի, չի կարող երևակայել, թե ինչ է պակասում», «իրերը օփիում են մարդկության համար», «ինչքան շատ ես սպառում, այնքան քիչ ես ապրում», «եղեք ռեալիստ, պահանջեք անհնարինը», «չենք խնդրելու ոչինչ, չենք պահանջելու ոչինչ, այլ վերցնելու ենք, գրավելու ենք», «ձանձրույթը հակահեղափոխական է»:

[3] Այժմ, մեր մաշկի վրա զգալով «վայրենի կապիտալիզմի» ու «ներկայացումների հասարակության» իրողությունները, մենք կարող ենք դա ասել ամենայն վստահությամբ: Դեբորի հետ Բոդրիյարն անձամբ ծանոթ չի եղել (տե՛ս [24], անգլերեն հրատարակություն, p. 16), բայց կասկածից վեր է Դեբորի աշխատությունների, առաջին հերթին՝ «Ներկայացումների հասարակություն» գրքի [17] ազդեցությունը վերջինիս վրա:

կան անիմաստ անարխիայի և վանդալիզմի գիրկը, և' Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունից, որը թերացավ ստանձնել հեղափոխական ավանգարդի իր հայտարարած դերակատարումը, չհանդգնեց գնալ իրոք համակարգային հեղափոխական փոփոխությունների ճանապարհով և դիմեց գործարքի կապիտալիստական ու ազգայնական ուժերի հետ (Բոդրիյարի այս հիասթափությունն առավել ակնհայտ կդրսևորվի նրա 1973թ. «Արտադրության հայելին» բեկումնային նշանակության գրքում):

«1968թ. մայիսի» նկատմամբ Բոդրիյարի բնութագրական վերաբերմունքը կարելի է գտնել գերմանական ամսագրերից մեկին տված հարցազրույցի հետևյալ հակիրճ ձևակերպման մեջ. «Այս իրադարձությունները [մայիսյան դեպքերը Ֆրանսիայում]՝ դասական օրինակ են այն բանի, թե ինչպես [մարդկանց] փոքրաթիվ մի խումբ կարողացավ զավթել և խեղաթյուրել շարժումը, «սիմուլյացիայի» ենթարկել իրականությունը»: Այս ձևակերպման տրամաբանությանը մենք դեռ կանդրադառնանք 80-ականների վերջին - 90-ականների սկզբին նեոկոնսերվատորների կողմից ԱՄՆ-ում «իշխանության զավթման» մասին Փ.Բյուքենենի պնդումները քննելիս:

Սակայն այդ տարիների Բոդրիյարի գործունեության մասին պատմող և մեր աշխատության համար ամենաուշագրավ դրվագը հետևյալն է[1]: Հուշերի իր «ֆրագմենտների» գրքում Բոդրիյարն օրինակելի անկեղծությամբ պատմում է. «Դա 60-ականների կեսերին էր, երբ ծանոթացա ու ընկերացա Ֆ.Գվատարիի[2] հետ: Այդ ժամանակ Ֆելիքսն ընկերություն էր անում մի շատ քաղաքականացված կնոջ հետ, որը մի փոքրիկ գրախանութ ուներ *Մոքեի*[3] մոտակայքում ...Մենք միտք հղացանք ստեղծել «Ֆրանսչինական ժողովրդական ասոցիացիան» ու թերթ հրատարակել... Սա Չինաստանում «մշակութային հեղափոխության» նախաշեմին էր: Ինձ կարգեցին այս թերթի խմբագիր, քանի որ ես չեզոք էի, չէի մասնակցում [այդ

[1] Զարմանալի է, թե ինչ հաստատունությամբ ստորև բերվող դրվագը վրիպում է Բոդրիյարին և *«le Mai 1968»*-ին նվիրված աշխատությունների հեղինակների ուշադրությունից: Օրինակ, Բոդրիյարին նվիրված ռուսերեն առաջին (և առայժմ վերջին) մենագրությունը [19]:

[2] *Pierre-Félix Guattari* (1930 - 1992) - ֆրանսիացի ակտիվիստ, գրոհային, հոգեվերլուծաբան և փիլիսոփա: 1968թ. վերջից ու երկար տարիների ընթացքում ակտիվորեն համագործակցում էր Ժ.Դելյոզի (հետագայում նաև՝ Մ.Ֆուկոյի հետ): Դելյոզի հետ միասին հանդիսանում է հայտնի երկհատոր «Կապիտալիզմ և շիզոֆրենիա» աշխատության հեղինակը:

[3] *Mosquée* (մզկիթ) - անցած դարի 20-ական թվականներին իսպանա-մավրիտանական ոճով կառուցված Փարիզի Մահմեդական ինստիտուտի շենքերի համալիր:

ժամանակվա] գաղափարախոսական մարտերին և ոչ մի քաղաքական կազմակերպության անդամ չէի: Ինչ-որ իմաստով ես քողի դեր էի կատարում …[Այնուամենայնիվ], մեր ասոցիացիայի ընդհանուր ժողովը բռնությամբ ցրվեց *OAS*[1] գրոհայինների կողմից… Ավելի ուշ, երբ *սիտուացիոնիստները* սուր քննադատությամբ հարձակվեցին Լեֆևրի վրա, նրանք ինձ խարանեցին որպես *մառիստ*» ([24, pp.15-20]):

Ու այստեղ Բոդրիյարը բերում է մի դիտարկում, որի համար, անկեղծորեն ասած, և բերեցինք այս մեջբերումը: Բոդրիյարը շարունակում է. «...Պետք է ասեմ, որ չինացիները մեր նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չդրսևորեցին …մեզնից մեկը[2] նույնիսկ Ալժիր մեկնեց Չժոու Են Լային[3] հանդիպելու: Բայց նա մեր մասին լսել անգամ չկամեցավ: Ուրիշները մեկնեցին Ժնև՝ նույն այդ նպատակով, և նույնքան ապարդյուն[4]: ...Չինացիներն ուզում էին գործ ունենալ միայն արդեն կայացած, բոլոր առումներով օրինական և *աջակողմյան դիրքորոշում* ունեցող կազմակերպության, այլ ոչ թե փոքրաքանակ, անկառավարելի ձախական մի ինչ-որ խմբի հետ»:

Նկատենք հետևյալը. խունվեյբիների նվաստացումները վերապրած, նրանց դեմ ընդդիմացած և, ինչը կարևոր է՝ ողջ մնացած Չժոու Են Լայը (և Դեն Սյաո Պինը) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության այն գործիչներն են, որոնց պետք է պարտական լինի այս երկիրն իր ներկայիս հզորացմամբ: Այն ժամանակ՝ 60-ականների 2-րդ կեսերին, որքան դյուրին պետք է լիներ նրանց համար տեղի տալ համատարած ու գլոբալ «ձախականությանը», այս կպչուն ու կործանարար մոդային, «գլոբալիզացիային»՝ ինչպես կասեինք այսօր: Որքան հեշտ էր այդ ժամանակ կորցնել սթափությունն ու հավասարակշռությունը, տրվել ընդհանուր հոսանքին և

[1] *OAS, Organisation armee secrete* - ուլտրագաղութատիրական ընդհատակյա ռազմականացված կազմակերպություն, որն այդ տարիներին գործում էր Ալժիրում և Ֆրանսիայում:

[2] Ենթադրում եմ, որ դա հենց Բոդրիյարն էր:

[3] Հիշեցնենք, որ թե՛ Չժոու Են Լայը (*Zhou Enlai, Чжоу Энлай,* 1898-1976)՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, թերևս, ամենաականավոր գործիչը, 1954–1976թթ. Չինաստանի քաղխորհրդի նախագահը, թե՛ իր ավելի կրտսեր գործընկեր՝ Չինաստանի վերակառուցման ապագա ճարտարապետ Դեն Սյաո Պինը (*Deng Xiaoping, Дэн Сяопин,* 1904 -1997), մարքսիզմի հետ ծանոթացան 20-ականների Ֆրանսիայում, կոմունիստ դարձան այստեղ, ուսանող էին այստեղ, աշխատեցին որպես բանվոր և լրագրող, հանքափոր և ընդհատակյա ակտիվիստ, կուսակցական գործիչ և կազմակերպիչ, այստեղ ծանոթացան արհմիությունների գործունեությանը, արևմտյան մշակույթին, գաղափարախոսություններին և կառույցներին:

[4] Ենթադրում եմ, որ դա Գվատարին էր:

ընկղմվել «քաոսի» մեջ: Առավել ևս, որ նրանք մարքսիստ էին և կոմունիստ: Բայց ոչ: Տարատեսակ մոդայիկ վայրիվերումներում չկորցնելով *ազգային* խնդիրների հրամայականը՝ այս գործիչներն իրենց երկիրը տարան «4-ի ավազակախմբի» և «Տյանանմին հրապարակի» միջով՝ դեպի զարգացում: Գալիք տասնամյակների համար ապահովեցին Չինաստանի վերխոյացումը՝ որպես համաշխարհային ուժային բևեռ: Հպարտ պետք է լինի այն ազգը, որը ծնում է Չժոու Են Լայի և Դեն Սյաո Պինի նման *ազգային* առաջնորդներ:

1968թ. վերջից Բոդրիյարը խզում է հարաբերությունները ձախ ռադիկալ խմբավորումների և *«Utopie»* ամսագրի հետ:

2.5.2. 1968թ. և «Նոր աշխարհակարգը». զուգահեռականներ

Ֆրանսիայում գրեթե 44 տարի առաջ ծավալվող իրադարձությունների նկատմամբ մեր հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն Բոդրիյարի մտքի կայացման վրա նրանց ազդեցության տեսանկյունից, այլև ներկայումս աշխարհում ընթացող կարևորագույն գործընթացների հետ իրենց ներքին կապով և մեր հոդվածի առաջին մասում դրված երկու հարցերով: Չխորանալով 2011թ. աշխարհում ծավալվող գործընթացների և «1968թ. մայիսի» համեմատական վերլուծության մեջ[1]՝ սահմանափակվենք հետևյալ չորս դիտարկումներով:

Առաջինն այն է, որ Արևմուտքի և Արևելքի զարգացած երկրներում կապիտալիստական հասարակարգի և բանկերի կողմից հասարակության ու աշխատավորների կեղեքման դեմ ուղղված ներկայիս բողոքը՝ Նյու Յորքում և ԱՄՆ տասնյակ այլ քաղաքներում, Հռոմում, Մադրիդում, Փարիզում, Լոնդոնում, Մոսկվայում, Շանհայում և այլն (տե՛ս բնաբանը), թե՛

[1] Շնորհակալ, սակայն ոչ դյուրին գործ կլիներ 1968 և 2011թթ. աշխարհում ընթացող դեպքերի և իրողությունների զուգահեռ վերլուծությունը: Թե ինչքան հեշտ է այս հարցերում ընկնել ծայրահեղությունների, իրողությունների անհամարժեք ու սահմանափակ ընկալումների մեջ՝ կարելի է տեսնել, օրինակ, Վ.Ասցատրյանի «Մշակութային հեղափոխություն և մշակութային մարքսիզմ» հոդվածում («21-րդ ԴԱՐ», թիվ 5, 2011թ.): Արևմուտքի ճգնաժամային երևույթների հանդեպ իր յուրատեսակ գերուշադրությամբ՝ զուգորդված կոմունիստական-սոցիալիստական աշխարհի իրողությունների հանդեպ ինֆանտիլ ամնեզիայով, այս աշխատությունը տիպական է նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և նախկին սոցճամբարի երկրների գրեթե բոլոր լեզուներով, հատկապես ռուսերենով գրված վերջին տասնամյակի հարյուրավոր աշխատությունների համար:

բովանդակային, թե՛ գաղափարախոսական և թե՛ կազմակերպչական առումներով հետևանքն են «1968թ. մայիսի», դրա արձագանքն են ու շարունակությունը: Դա հստակորեն կարելի է տեսնել «համաշխարհային սարդոստայնում», հոբելյանական 2008-ից սկսած՝ անարխիստական, տրոցկիստական, սիոնիստական, մարքսիստական և նման այլ կայքերում հայտնված և Ֆրանսիայի «1968թ. մայիսին» նվիրված անալիտիկ-պատմական ակնարկներում, «1968թ. մայիսը» վերակենդանացնելուն ուղղված այս ուժերի «գործողությունների ծրագրերում»: Ըստ էության, 2008-ից ի վեր մենք ականատեսն ենք (մասամբ) հենց այս ծրագրերի իրականացմանը:

Բացեք *Youtub*-ում բրիտանական հանրահայտ «Ռոլինգ սթոունզ» ռոք-խմբի 1968թ. թողարկած «Մուրացկանների բանկետը» (*Beggars Banquet)* ալբոմի, հատկապես՝ Մ.Ջագերի *«Street Fighting Man»* երգին նվիրված էջը (երգը Ջագերը գրել էր Փարիզում 1968թ. մայիսին ընթացող բախումների անմիջական ազդեցության տակ) և ընթերցեք այսօր՝ 2011թ. հոկտեմբեր-նոյեմբերին այստեղ զետեղված հարյուրավոր մեկնաբանությունները (ստորև, առանց թարգմանության ներկայացնում ենք առավել հաճախ կրկնվողները[1]): Զվարճալի է տեսնել այստեղ «նոր աշխարհակարգին» նետված անեծքները, հենց նոր աշխարհակարգի ստեղծմանն ու հաստատմանն ուղղված շարժման սրտից: Բոդրիյարյան *սիմուլյակրների* գործունեության փառահեղ մի օրինակ:

Սակայն ներկայումս ծավալվող գործընթացների և *«le Mai 1968»*-ի միջև առկա է սկզբունքային տարբերություն. այն, որ նախ ԽՍՀՄ և սոցճամբարի փլուզումից հետո կոմունիստական կուսակցությունները, մանավանդ Արևմուտքի երկրներում, սրընթաց կորցրին իրենց հեղինակությունն ու համակիրներին և այլևս ունակ չեն ստանձնել այն դերակատարումը, որն ունեին 60-ականներին: Թուլացած է նաև ազգային արիմիությունների դերակատարումը՝ առաջին հերթին «կապիտալիստական աշխարհի նորեկների» մոտ՝ Արևելյան Եվրոպայի երկրներում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Այս հանգամանքը հանգեցնում է նրան,

[1] «F * * k the New World Order!, Long live Julian Assange! Death to the New World Order! OCCUPY WALL STREET! Go Occupy!! Its TIME AGAIN!!»: http://www.youtube.com/watch?v=qUO8ScYVeDo

որ ներկայիս բողոքի գործընթացները ոչ Արևմուտքի զարգացած երկրներում, ոչ այլուր չեն ձևափոխվում և չեն կարող ձևափոխվել իրական զանգվածային շարժման: Դրանք ընդհանուր առմամբ քաոտիկ են, հետևաբար՝ ենթակա տարբեր խեղաթյուրումների: Մասնավորապես, ԱՄՆ-ում այս խայտաբղետ շարժումն աջակողմյան և կոնսերվատիվ «Թեյի կուսակցությանը» (*Tea Party*) յուրօրինակ հակազդեցության ու հակակշռության փորձ է: Իսկ արաբական աշխարհում, ուր կոմկուսների և արհմիությունների դերակատարումը պատմականորեն այնքան էլ մեծ չէր, վակուումը լրացվում է իսլամական գործոնով, տարատեսակ «մահմեդական եղբայրություններով», Արաբական լիգայի ու Կատարի շեյխերի «տրանսնացիոնալ» գործառույթների ուժեղացմամբ:

2.5.3. «le Mai 1968». ազգայինն ընդդեմ ապազգայինի

Մեր երկրորդ դիտարկումն այն է, որ ճիշտ այնպես, ինչպես խեղաթյուրման ենթարկվեց «*le Mai 1968»*-ը Ֆրանսիայում, նույն կերպ խեղաթյուրման է ենթարկվում նաև մերօրյա «բողոքական շարժումն» ընդդեմ կապիտալիզմի ու բանկերի: Այն հեռացվում է *ազգայինի* ու *միջազգայինի* դաշտից և ուղղվում «տրանսնացիոնալ» դաշտ[1]: Իրոք, եթե հակառակորդդ՝ բանկերը և կապիտալիստները, այլևս վերազգային են կամ «տրանսնացիոնալ», ապա պայքարը նրանց դեմ արդյունավետ լինելու համար նույնպես պետք է լինի վերազգային, այսինքն՝ ոչ ազգային[2]: Այս հանգամանքը հատկապես ընդգծված է արաբական աշխարհում 2010թ. վերջից տեղի ունեցած գործընթացներում, ուր հաջորդաբար ոչնչացվում են քիչ թե շատ կայացած (կայացող) և ընդգծված ազգային բնույթ ունեցող ռեժիմները՝ Եգիպտոս, Լիբիա և Սիրիա: Ահա սա է, մեր կարծիքով, կատարվող խեղաթյուրման բուն էությունը, ինչը և բերում է մեզ մեր հաջորդ՝ կենտրոնական դիտարկմանը «*le Mai 1968»*-ի խորքային բովանդակության վերաբերյալ:

Բանն այն է, որ «*le Mai 1968»*-ին նվիրված տասնյակ աշխատություններում, մանավանդ 2008-ից հետո հրապարակվածներում, դուք կկարդաք, որ

[1] Բոդրիյարը, հետևելով և «մոռանալով» Ֆուկոյին, կասեր այստեղ նաև՝ «տրանսսեքսուալ դաշտ»:
[2] Այս պնդումն, անկասկած, դուր կգար ընկեր Տրոցկուն:

«*le Mai 1968*»-ի մասշտաբային երևույթների էությունը Ֆրանսիայի ուսանողության և աշխատավոր դասի ընդվզումն էր ընդդեմ կապիտալիստական հասարակարգի: Մեր կարծիքով, այս պնդումը ճշմարտության միայն մեկ, այն էլ ոչ կարևոր մասն է: Հակառակը, ամենևին չնսեմացնելով ֆրանսիական հասարակության աշխատավոր դասի (բայց ոչ ուսանողության) տարած հաղթանակը և դրանում արհմիությունների ու կոմկուսի դերակատարումը[1], այնուամենայնիվ, կարծում ենք, որ Ֆրանսիայում 1968թ. և հատկապես հաջորդ՝ 1969թ. իրադարձությունների նպատակն էր կանխել ուժեղ, *ազգային* Ֆրանսիայի կայացումը: Կանխել Արևմտյան Գերմանիայի հետ քաղաքական տանդեմի կայացումը, որում Ֆրանսիան կհանդիսանար քաղաքական լիդեր: Առավել ևս՝ կանխել ուժեղ և ազգային Ֆրանսիայի՝ «տարբեր ազգությունների և ազգ-պետությունների միացյալ Եվրոպայի»[2] քաղաքական սիրտ ու կենտրոն դառնալը: Կարճ ասած՝ «*le Mai 1968*»-ի էությունը Ֆրանսիայում *ազգային* և *ապազգային* ուժերի բախումն էր:

Այս պարզ իրողության հասարակ փաստումն անգամ, էլ չենք խոսում դրա ընդունման մասին, ուղղակի անտանելի է ամենատարբեր ուժերի համար: Ազգային զարթոնքը, ազգային մտածելակերպն արգահատելի են և օտար, օրինակ, ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (*NIC*) վերլուծականների հեղինակների համար, ներկայիս տարատեսակ գլոբալ բյուրոկրատական կառույցների համար [18], թե՛ գլոբալիստների, թե՛ հակագլոբալիստների համար: Վերջապես, այն անընդունելի է անարխիստական, նեոկոմունիստական և տրոցկիստական ամենատարբեր խմբավորումների համար: Հետաքրքիրն այն է, որ ազգային զարթոնքի երևույթների քողարկման, դրա անտեսման կամ նենգափոխման (սիմուլյացիայի) իրենց արարքներում բոլոր այս ուժերի մոտեցումները ծիծաղելիորեն (եթե ծիծաղն այստեղ տեղին լիներ) միօրինակ են: Դիտարկենք տիպական մի դեպք:

[1] Ի վերջո, չէ՞ որ «40-60-1000» բանաձևի շուրջ 1968թ. կնքված նոր «սոցիալական դաշինքն» էր, որ ապահովեց Ֆրանսիայի սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մարդկային զարգացումն անցած չորս տասնամյակների ընթացքում:

[2] Սա նախագահ դը Գոլի հայտնի տեսլականի ճշգրիտ անվանումն է, որը հիմա հաճախ (և սխալ) անվանվում է «Եվրոպա՝ Վանկուվերից Վլադիվոստոկ» (մեկ-մեկ Վանկուվերն այստեղ փոխարինվում է Լիսաբոնով): Նման վերանվանումը նույնպես բոդրիյարյան յուրօրինակ «սիմուլյակր» է, ուր դրգռյան պնդման կենտրոնական՝ ազգային բաղադրիչը փոխարինվում, «սիմուլյացվում» է ապազգային գոյով՝ պարզ, միօրինակ ու զուտ աշխարհագրական համընդգրկունությամբ: Ճիշտ ինչպես Սուդանը, Իրաքը կամ Լիբիան պետություններից դառնում են (դարձան) անդեմ տարածքներ:

2008թ. մայիսի 2-ին ոմն պրն (ընկեր) Ա.Վուդս տրոցկիստական (բրիտանական) կայքում հետևյալ կերպ է վերլուծում «*le Mai 1968*»-ը և նախագահ դը Գոլի պարտությունն այս դեպքերից մեկ տարի հետո. «60-ականների վերջին նա [դը Գոլը] կորցրել էր ժողովրդականությունը: Նա իշխանության մեջ էր արդեն տասը տարի, նրա ուղիղ կապը Ֆրանսիայի ժողովրդի հետ արդեն թուլացել էր: Շատերը Ֆրանսիայում դիտում էին նրան որպես անախրոնիզմ, հետադեմ մի ուժ, որի գաղափարները և իդեալները ոչ կիսում էին, ոչ նույնիսկ հասկանում: Պատերազմից հետո ծնված սերնդի համար դը Գոլի իդեալներն այլևս համարժեք չէին: *Ֆրանսիական մշակութային ավանդույթները խեղված էին 60-ականների երիտասարդական գլոբալ մշակույթով:* 1967թ. ընտրություններում նա հաղթեց նվազագույն առավելությամբ, և արդեն 1968թ. մարտին *Le Monde*-ը իրավացիորեն կարող էր գրել. *«La France s'ennuie»* [«Ֆրանսիան ձանձրանում է»]. ահա այս ձանձրույթն էր և մի այլ Ֆրանսիա տեսնելու ցանկությունը, որը հանդիսացավ քաղաքական ասպարեզից դը Գոլի հեռացման պատճառը, և որին մենք կնվիրենք մեր հաջորդ դասախոսությունը» (ընդգծումը մերն է - *Ա.Մ.*)[1]:

Բավական է այս պարբերությունում փոխարինել դը Գոլի անունը՝ Մ.Քադաֆիով[2] և Ֆրանսիան՝ Լիբիայով, ու դուք կստանաք 2011թ. սկզբից Լիբիային (Թունիսին, Ալժիրին, Եգիպտոսին, Սիրիային, Իրանին) նվիրված հարյուրավոր հոդվածների գաղափարախոսական շաբլոնը: Ինչևէ:

Չգիտեմ, թե ինչ է ասել իր խոստացած հաջորդ դասախոսությունում ընկեր Վուդսը (այն կարդալու պատեհ առիթ այդպես էլ չունեցանք), սակայն գիտեմ, որ իր առաջին դասախոսության այս ձևակերպումն առնվազն մակերեսային է, իսկ իրականում՝ իրողությունները նենգափոխող: Նախ, բերված պարբերությունից հետևում է, որ Վուդսը վատ է տիրապետում դեպքերի ժամանակագրությանը: Իրոք, 1968թ. մարտին *Le Monde*-ի արձանագրած այս «ձանձրույթը» բոլորովին էլ չխանգարեց գոլիստներին և աջակողմյան ուժերին 1968թ. հունիսի 30-ին ջախջախիչ հաղթանակ տա-

[1] http://www.marxist.com/french-revolution-may-1968-part-one.htm

[2] Գնդապետ Քադաֆին գեներալ դը Գոլի մեծ երկրպագուն էր, որոշ առումով՝ աշակերտը:

նել «ձախականների» և նույնիսկ կոմկուսի հանդեպ Ազգային ասամբլեայի ընտրությունների ժամանակ (տե՛ս *Հավելվածը* կամ գոնե *Le Monde*-ի 1968թ. հունիսյան համարները):

Եվ հետո, մինչև 1969թ. ապրիլի 27-ի «վստահության հանրաքվեն», որի արդյունքում դը Գոլը հավաքեց մոտ 11 մլն կողմ, բայց և մոտ 12 մլն դեմ ձայներ[1], արդեն տեղի էին ունեցել շատ կարևոր իրադարձություններ՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից ավելի վճռորոշ, քան «1968թ. մայիսը»: Իրոք, նախագահ դը Գոլը՝ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Ֆրանսիայի «դեմքն ու պատիվը» փրկած այս գեներալը, մինչև վերջ (գրեթե մինչև վերջ) տարավ իր *ազգային* քաղաքականությունը և Ֆրանսիան դարձրեց միջուկային երկիր՝ միջուկային «տրիադի» բոլոր անհրաժեշտ տարրերով (1968թ. օգոստոս), իր սիրելի Ֆրանսիայի համար ապահովելով պատշաճ տեղ աշխարհի «վճիռ կայացնող» երկրների ակումբում: Եթե 1945թ. ինչ-որ տեղ հասկանալի էր Գերմանիայի կապիտուլյացիայի պայմանագիրը ստորագրող ֆելդմարշալ Կեյտելի կծու դիտողությունը՝ «չգիտեի, որ մենք պարտվել ենք նաև Ֆրանսիային», ապա 1968թ. օգոստոսին այս հեգնանքն արդեն միանգամայն անտեղի կլիներ: Այնուհետև, դը Գոլը դուրս բերեց Ֆրանսիան ՆԱՏՕ ռազմական (և միայն ռազմական) դաշինքից[2]: 1963թ. հունվարի 22-ին նա ԳՖՀ կանցլեր Կ.Ադենաուերի հետ կնքեց ֆրանս-գերմանական համագործակցության պատմական դաշինքը, որը հիմք հանդիսացավ Արևմտյան Եվրոպայի հետագա միավորման համար՝ միևնույն ժամանակ հետևողականորեն սանձելով, իր խոսքերով՝ «անգլո-սաքսերի հեգեմոնիան մայրցամաքում»:

Այնուհետև, երբ եկավ ժամանակը (1968թ. սեպտեմբերի 17-ին), նա սաստեց ԽՍՀՄ-ին (ԱՄՆ-ի և Մ.Բրիտանիայի հետ) Արևմտյան Գերմանիայի նկատմամբ ոտնձգություններ կատարելու մտադրությունից (տե՛ս *Հավելված*): Դը Գոլը վարժեցրեց Գերմանիային ընդունել եվրոպական գործերում Ֆրանսիայի քաղաքական առաջատարի դերակատարումը: Բացի այդ, նա ուղիղ և անկախ հարաբերություններ հաստատեց Ռումինիայի,

[1] Ավելի ճշգրիտ՝ «10,901,753 *oui*» և «12,007,102 *non*»:
[2] 1963թ. հունվարի 21-ին նա դուրս բերեց ֆրանսիական ռազմածովային ուժերը ՆԱՏՕ հրամանատարությունից, իսկ 1966թ. մարտի 7-ին ստիպեց տեղափոխել ՆԱՏՕ գլխավոր հրամանատարությունը Ֆրանսիայից դուրս՝ Բրյուսել:

Հարավսլավիայի, Ալբանիայի, Եգիպտոսի և մի շարք արաբական երկրների, ինչպես նաև Չինաստանի հետ (սկսած 1964թ. հունվարի 24-ից): Վերջապես, արձագանքելով «6-օրյա պատերազմի» իսրայելական ագրեսիայի իրողություններին (հին Երուսաղեմի, Գազայի հատվածի և այլ տարածքների զավթում)՝ նա 1969թ. հունվարի 6-ին արգելեց Իսրայելին ֆրանսիական զենք ու զինամթերք վաճառել և արգելափակեց այդ երկրի հետ ռազմատեխնոլոգիական համագործակցությունը: Սրանք էին դը Գոլի ֆրանսիական ազգային պետականության կառուցման գործում ձեռք բերած դարակազմիկ նշանակության նվաճումները: Այնպես որ, «ձանձրույթի» մասին խոսք անգամ լինել չի կարող:

Եվ որքան էլ տարօրինակ թվա, հենց այս ազգային նվաճումներն էին դը Գոլի 1969թ. ապրիլի 27-ի պարտության աշխարհաքաղաքական, կիրառական պատճառները: Այս իրողությունն է, որ չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել Ա.Վուդսը և տասնյակ այլ «ձախական» վերլուծաբաններ: Ուժեղ, ինքնուրույն և ազգային Ֆրանսիան այդ ժամանակ (և հիմա նույնպես) բոլորովին էլ պետք չէր ոչ ԱՄՆ-ին, ոչ Մեծ Բրիտանիային, ոչ ԽՍՀՄ-ին, ոչ էլ Իսրայելին: Այս առումով «1968թ. մայիսը» վերապրած ֆրանսիական հասարակական կարծիքի վրա համապատասխան կերպով ներազդելն առանձնապես բարդ խնդիր չէր[1]: Դե, իսկ արաբական աշխարհի, Ռումինիայի, Հարավսլավիայի, նույնիսկ Չինաստանի (այդ ժամանակվա) և Արևմտյան Գերմանիայի աշխարհաքաղաքական կշիռը 1968-69թթ., հիարկե, որակ չէր կարող կազմել:

[1] Թե ինչքան անբռնազբոս էին իրենց զգում, օրինակ, ԱՄՆ ԿՀՎ գործակալները և իսրայելական «Մոսադի» գրոհայինները Փարիզում՝ երևաց 1965թ. մարտի 25-ին, երբ այստեղ առևանգվեց և հետո սպանվեց մարոկոցի ձախ ռադիկալ լիդեր, Գ.Ա. Նասերի մտերիմ ընկեր, հայտնի (ցավոք՝ ոչ մեզ մոտ) Մահդի Բեն Բարկան՝ «*Իսթիքլալ*» կուսակցության և Երեք մայրցամաքների շարժման հիմնադիրը: Այս պատմությունն առաջացրեց անձամբ դը Գոլի լուրջ վրդովմունքն ու զայրույթը և էապես ազդեց ֆրանս-իսրայելական հարաբերությունների սառեցման ու Մարոկոյի հետ հարաբերությունների խզման վրա: (Ի դեպ, «*le Mai 1968*»-ի հոբելյանական՝ 2008թ. նկարահանված «Ես տեսել եմ Բեն Բարկայի սպանությունը» (*J'ai Vu Tuer Ben Barka*) ֆիլմում նրա դերը խաղաց Ս.Աբգարյանը): Եվ բավական է հիշել 60-ականներից շատ առաջ և հետո Ֆրանսիայում ու Փարիզում կատարված քաղաքական առևանգումների ու սպանությունների մի այլ, շատ ավելի ծավալուն ու արյունոտ խրոնիկա՝ հասկանալու համար, թե որքան վստահ էին իրենց զգում Փարիզում ԽՄԿԿ քաղբյուրոյի *ИНО*-ի (արտասահմանյան բաժնի) ու *КГБ*-ի «տղաները», իսկ ավելի վաղ՝ Կոմինտերնի *ИККИ*-ի (գործադիր կոմիտեի) ու *ИНО ВЧК-ОГПУ-НКВД*-ի գործակալները: Նույնը կարելի է ասել ամերիկյան, բրիտանական, գերմանական, մաոիստական կամ տրոցկիստական տարատեսակ ու խայտաբղետ էմիսարների բանակի մասին: Դե, իսկ *մեզ* պետք է, որ առավել ուսուցանելի լինի *ASALA*-ի մերժելի գործունեությունը Ֆրանսիայում՝ թե՛ Բախտիյարի նկատմամբ մահափորձի, թե՛ այլ ահաբեկչությունների հետ կապված:

Վուդսից բերված պարբերությունը, սակայն, պարունակում է մեկ ճշգրիտ դիտարկում՝ յուրօրինակ խոստովանանք, էլ ավելի արժեքավոր՝ շնորհիվ այն բանի, որ հնչում է տրոցկիստի շուրթերից: Խոսքը, իհարկե, այն մասին է, որ «ֆրանսիական մշակութային ավանդույթները խեղված էին 60-ականների երիտասարդական գլոբալ մշակույթով», և որի հետևանքով բնակչության մի զգալի հատվածի համար դը Գոլի պես ազգային գործչի ֆիգուրն «ազգային հերոսից» դարձել էր այլևս «անախրոնիզմ»: Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես է Ֆրանսիան՝ Արևմուտքի զարգացած այս առաջին երկիրը, ընկնում Ա.Գրամշիի «կոնտրկուլտուրայի» ահեղ, համակարգային, «ցանցային»՝ ինչպես կասեին այսօր, հարվածների տակ: 80-ականների վերջին - 90-ականների սկզբին հերթը կհասնի ԱՄՆ-ին («նեոկոնների» կողմից իշխանության զավթում) ու ԽՍՀՄ-ին (համակարգային փլուզում), 2004թ.՝ Իսպանիային (2004թ. մարտի 11-ի ահաբեկման ճնշման տակ պետության քաղաքական կուրսի ամոթալի փոփոխում), 2011թ.՝ Եգիպտոսին, Լիբիային և Սիրիային: Հերթի մեջ է Իրանը: Այս երևույթներին մենք դեռ կանդրադառնանք մեր հոդվածի հաջորդ մասերում:

2.5.4. Թուրքիան, ռումբը և մենք

Գանք 1968 և 2011թթ. կապի մասին մեր վերջին դիտարկմանը: Այն վերաբերում է Թուրքիային: Հայ-թուրքական հարաբերություններին և ԱՄՆ *RAND* կորպորացիայի փորձագետների կողմից ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վերլուծությանը նվիրված մեր հոդվածում [13] առիթ ունեցել էինք ընդգծել, որ ԱՄՆ-ում Բ.Օբամայի նախագահ ընտրվելուց հետո ԱՄՆ-ի համար Թուրքիայի ռազմավարական նշանակությունը, հակառակ այդ ժամանակ տարածված տեսակետի, ոչ միայն չի թուլանա, այլ նաև կամրապնդվի նոր գործոններով: Այդ հոդվածում բերում էինք Թուրքիայում հետագա զարգացումների՝ *RAND*-ի կողմից մշակված չորս հնարավոր սցենարները. 1. արևմտամետ Թուրքիա, 2. իսլամացող Թուրքիա, 3. ազգայնացող Թուրքիա, 4. ռազմական հեղաշրջում: Ընդ որում, ըստ *RAND* փորձագետների՝ կարճաժամկետ-միջնաժամկետ հեռանկարում ամենահավանականն էր համարվել «ազգայնացող Թուրքիա» սցենարը, իսկ հաջորդ հավանականը՝ «իսլամացող Թուրքիան»:

Հիմնականում համաձայնելով այս դիտարկման հետ՝ մեր հոդվածի ռուսերեն հրատարակման համար 2010թ. հոկտեմբերին կատարված հավելումում [13] ընդգծել ենք, որ Թուրքիայում իրական զարգացումներն ընթանում են, այսպես ասած, խառը՝ «իսլամա-ազգայնական» սցենարով: Այն ներառում էր Թուրքիայի հարաբերությունների վատթարացումը Իսրայելի և Սիրիայի հետ՝ կտրուկ, իսկ Հունաստանի և Կիպրոսի հետ՝ ավելի դանդաղ, ինչպես նաև որոշակի հեռացում ՆԱՏՕ-ից և ԵՄ-ից (բայց ոչ ԱՄՆ-ից): Այս տարվա մարտին գտնվեց այս խառը սցենարի անունը՝ «Թուրքական գոլիզմ» [20]: Ահա թե ինչպես է այն նկարագրում այս անվանման հեղինակներից մեկը՝ Օ.Թաշփընարը. «Թուրքական գոլիզմը համադրում է թե՛ նեոօսմանիզմի [սա *RAND*-ի «իսլամացող Թուրքիան» է - *Ա.Մ.*], թե՛ քեմալիզմի [սա *RAND*-ի «արևմտամետ Թուրքիան» է - *Ա.Մ.*] բազում հատկանշական տարրեր… այն օրեցօր ավելի է մարմնավորվում որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության յուրօրինակ՝ 3-րդ տեսլական»: Ընդ որում, շարունակում է Օ.Թաշփընարը, քաղաքական դաշտը Թուրքիայում գլխիվայր շուռ է եկել: Իրոք, վարչապետ Ռ.Էրդողանի *AKP* կուսակցությունը, լինելով «մեղմ իսլամիստական», իրականում շատ ավելի արևտամետ օրենքներ ընդունեց, քան դրանից առաջ վերջին քեմալիստական բոլոր կառավարությունները միասին վերցրած: Դեպքերի այսպիսի զարգացումից գոհ լինելու փոխարեն քեմալիստները, այնուամենայնիվ, շարունակում են թերահավատ մնալ Էրդողանի և *AKP*-ի վարած քաղաքականության հանդեպ: «Քեմալիստները հանգեցին այն եզրակացության, որ հետևողականորեն առաջ տանելով եվրաինտեգրման օրակարգը, խոսելով փոքրամասնությունների իրավունքների մասին և առաջ տանելով սահմանադրական և այլ բարեփոխումները՝ *AKP*-ն որդեգրել է այսպես կոչված *taqiyya*-ի[1] գործելակերպը, և իրականում քողարկում, սիմուլյաց-

[1] *Taqiyya* (*taqiya*, *taqiyah*, *tuqyah*) - մահմեդական իրավագիտության հատուկ եզր, որն օգտագործվում է հիմնականում կրոնական դավանանքի կեղծման կամ կոծկման համար: Օրինակ, շիաների կողմից՝ սուննիների բռնաճնշման տակ (կամ, ավելացնենք, քրիստոնյաների կողմից մահմեդականների բռնաճնշման տակ: Թեև այս դեպքում այս եզրը զրկվում է իրեն բնորոշ որոշակի «լեգիտիմությունից»): Ընդհանրապես, հարկավոր է ասել, որ մեր հարևանները կարող են իսկական դաս տալ Բոդրիյարին, թե ինչ են իրականում նշանակում սիմուլյացիան և սիմուլյակրը: Ի դեպ, հիշեցնենք, որ Բոդրիյարի «Սիմուլյակրը և սիմուլյացիան» գիրքը թուրքերեն թարգմանվեց ու հրատարակվեց 2003թ.:

նում է իր հիմնական նպատակը»,- գրում է 2011թ. մարտի 8-ին Օ.Թաշփը-նարը ԱՄՆ հնագույն «ուղեղային կենտրոն» հանդիսացող *Բրուքինգս* հաստատության համար իր հոդվածում [21]: Այս ամենի իրական նպատակն է «քաղաքական իսլամի համար լուրջ պատնեշ հանդիսացող և իրոք արևմտամետ քեմալիստների և ռազմական վերնախավի թուլացումը»[1]:

Եվ դրա համար ներկա իրավիճակում չկա ավելի արդյունավետ քայլ, քան քեմալիստներին (բայց ոչ մի դեպքում՝ Թուրքիային) մեղադրել Թուրքիայի անցյալի մութ էջերի համար: Ընդ որում, այս իրավիճակը ճիզվիտային «սիմուլյակրի» հնարավորություններ է բացում Թուրքիայի ներկայիս իշխանությունների համար՝ «ներողություն խնդրել» առանց ներողություն խնդրելու, թուլացնել քեմալիստներին՝ առանց Թուրքիան թուլացնելու, օգտագործել «Սևրի սինդրոմը»՝ առանց վտանգելու երկրի ամբողջականությունը, պահպանել իշխանությունը և «օրինակ հանդիսանալ արաբական աշխարհի համար»՝ առանց քեմալիստներին ոտքի հանելու, մեղմելու քրդական շարժումը՝ առանց հեռուն գնալու:

Իրոք, 2011թ. նոյեմբերի 23-ին *AKP* կուսակցության հավաքի ժամանակ Թուրքիայի վարչապետ և նշյալ կուսակցության առաջնորդ Ռ.Էրդողանը, թափահարելով ձեռքին եղած թերթիկները, հարկ համարեց անդրադառնալ 1937-38թթ. Դերսիմի կոտորածներին: «Այստեղ, փաստաթղթերում տրվում է Դերսիմում կատարված զինված միջամտության հանրագումարը: Առդիրում էլ մի աղյուսակ կա, որտեղ ներկայացված է մահացածների, կենդանի հանձնվածների թվաքանակը: Այս պաշտոնական փաստաթղթում նշված է նաև, որ 1936-37-38-39թթ. ընդհանուր առմամբ սպանվել է 13806 հոգի,- գոչում էր Էրդողանը և շարունակում,- փաստաթղթի տակ եղած ստորագրությունն էլ է հետաքրքիր, ստորագրողն է Ֆաիք Օզտրաքը, այսինքն՝ այն ժամանակվա ներքին գործերի նախարարը: ...1938թ. դեկտեմբերի 23-ին միայն Թունջելիի շրջանից 11683 հոգի, այնուհետ 2000 մարդ է աքսորվել, և այդ որոշումը կայացվել է նախարարների խորհրդի կողմից: Իսկ գիտեք ո՞վ էր այն ժամանակվա վարչապետը՝ Ջելալ Բայարը: Իսկ նախագահն էր, փարդոն, ինքը՝ Իսմեթ Ինանյուն»:

[1] Ջիուջիցու մարտարվեստում այս հնարքը կոչվում է «օգտագործիր հակառակորդիդ շարժման իմպուլսը՝ նրան շուռ տալու համար»:

Եվ այստեղ Էրդողանը տալիս է մի հարց, որը, անկեղծ ասած, չեմ հասկանում, թե ինչու հայրենական և սփյուռքահայ մամուլի էջերում հսկայական ալիք բարձրացրեց: Նա հարցնում է. «Մի՞թե սրա համար *ես* պիտի ներողություն խնդրեմ: Հարգելի Քըլըչդարօղլու[1], հիմա ո՞ւր ես փախչելու, սրանից ո՞ւր ես ծլկելու: Ես եմ ներողություն խնդրելո՞ւ, [թե՞ դու]: Եթե պետության անունից ներողություն է խնդրվելու, եթե այդպիսի պրակտիկա կա գրանցված գրականությունում՝ կխնդրեմ, խնդրում եմ»,- սրտնեղում էր Էրդողանը:

Այս ամենն ինձ հիշեցրեց Վ.Ուլյանովին, որը սրտնեղում էր ներողություն խնդրել իր երկրում կայսերական Գերմանիայի հյուպատոս կոմս Միրբախի սպանության համար: «Ով որ խփել է[2], թող նա էլ գնա ներողություն խնդրի»,- փնթփնթում էր Լենինը 1918թ. հուլիսի 6-ին: Ավելի ճշգրիտ՝ Լենինի դերը կատարող դերասան Կայուրովը «Հուլիսի 6-ը» ֆիլմ-սիմուլյակրում[3]: Դե, իսկ եթե լուրջ՝ բա էլ ո՞վ պիտի ներողություն խնդրի, Գյուլնազ տա՞տը: Թե՞ Թուրքիայի Հանրապետության վարչապետն ու նախագահը: Եթե ավելի լուրջ, մեզ կամ զազաներին, հույներին կամ քրդերին առհասարակ պե՞տք է այսպիսի կամ դրա նման մի «ներողություն»: Օրինակ՝ «կներեք, հայեր: Էս էլ ձեզ մի երկու կոպեկ»: Ու սա՝ լավագույն դեպքում: Եվ արդեն իսկապես լուրջ՝ «Ի՞նչ ենք անելու մենք, եթե Թուրքիան ներողություն խնդրի» [22]:

Վերջապես, մեզ այստեղ հետաքրքրող տեսանկյունից չափազանց ուշագրավ է Թաշփընարի նաև հետևյալ, կարծում եմ՝ սենսացիոն պնդումը.

[1] Խոսքը Թուրքիայի հիմնական ընդդիմադիր՝ քեմալիստական Ժողովրդա-հանրապետական կուսակցության (*CHP*) առաջնորդի մասին է: Դերսիմի կոտորածի օրերին Թուրքիայում գործում էր միակուսակցական համակարգ, երկրում միանձնյա իշխում էր երիտթուրքերի *Իթթիհատ վե թերաքքը* կուսակցության իրավահաջորդ *CHP*-ն, որն ստեղծել էր Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մ.Քեմալ Աթաթուրքը (Էրդողանի ելույթը մեր խնդրանքով թարգմանեց Ա.Սիմավորյանը, «Նորավանք» ԳԿՀ):

[2] «Խփել» էր հանրահայտ էսէռ Յակով Բլյումկինը, որն այդ ժամանակ Լենինից և Ձերժինսկուց դրա համար ներում ստացավ: Նա դեռ հասցրեց մեր կողմերում մի փոքր հեղաշրջում կազմակերպել (1920թ. հուլիսին Իրանում) և գնդակահարվեց միայն այն բանից հետո, երբ 1929թ. Ստամբուլում հանդիպեց իր վաղեմի ղեկավար և ընկեր Լեյբա Բրոնշտեյնին (Տրոցկուն): Հայի ինքնության և հայկական «ցանցային» աշխարհի առանձնահատկությունների քննման տեսանկյունից չափազանց հետաքրքիր կլիներ այս սպանության (և ընդհանրապես Բրեստ-Լիտովսկի պայմանագրի և էսէռների ենթադրյալ դավադրության) մեջ Պոռշ Պոռշյանի և Կարախանի դերակատարումների համեմատական վերլուծությունը: Կարծում ենք, այն շատ ուսանելի կլիներ. սա Ձեզ «Սարոյան եղբայրները» չեն:

[3] Միրբախի սպանության մասին հետաքրքիր և միայն վերջերս հրապարակված մանրամասների համար տե՛ս *Хавкин Борис*, Убийство Графа Мирбаха: по следам преступления. Форум новейшей восточноевропейской истории и культуры. № 2, 2006.

«Ինչպես և 60-ականների Ֆրանսիան դը Գոլի օրոք, Թուրքիան նույնպես կարող է ձեռնամուխ լինել իր ռազմավարական «հարվածային ուժի» (*force de frappe*), այն է՝ միջուկային զսպման կարողությունների գոյացմանը և ուրույն *realpolitik*-ի կերտմանը, ինչպես Չինաստանը, Հնդկաստանը և Ռուսաստանը: [Ֆրանսիայի օրինակով] Թուրքիան նույնիսկ կարող է լքել ՆԱՏՕ դաշինքի ռազմական համակարգը՝ պահպանելով քաղաքական համագործակցությունն այս կազմակերպության հետ» [21, p. 16]:

* * *

1968թ. մայիսի 28-ի ուշ երեկոյան, երկյուղած ու շփոթված ծավալվող իրադարձությունների մասշտաբներից, դրանց հակագոլիստական և հակազգային բնույթից, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ, «Ժաննա դ'Արկ» ավիակրի նավապետ, ծովակալ Ֆ.Ֆլոիկը նախագահի հետ կիսեց իր մտահոգությունները: Ի պատասխան լսելով դը Գոլի հետևյալ, կարծում եմ՝ պատմական, բառերը. «Մի տագնապիր, իմ Ֆլոիկ: Կոմունիստները սրանց կսանձեն» [23, p. 299]:

Հոդվածիս այս բաժինը կցանկանայի ավարտել մեր հիմնական երկու հարցերը ճշգրտող լրացուցիչ երկու հարցով: Ո՞վ կսանձի մեր տարածաշրջանում այս էլ 18 տարի Հայաստանը շրջափակման մեջ պահող գոլիստական Թուրքիային, 2023թ. հավանական է միջուկային զենք ունեցող Թուրքիային: Եվ, ինչպե՞ս է հնարավոր Հայոց եղեռնի ճանաչումը գոլիստական Թուրքիայում՝ 2015 թվականին: Կամ, միջուկային և գոլիստական Թուրքիայում՝ 2023 թվականին:

Սեպտեմբեր-նոյեմբեր, 2011թ.

(Շարունակելի)

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Արա,* Ազգային անվտանգությունը գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #1 (35), 2011թ., էջ 30-60:

2. *Հարությունյան Գագիկ,* Հայկական նոր պետականություն. կայացում և մարտահրավերներ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #6 (40), 2011թ., էջ 5-30:
3. *Jarry, Alfred,* Guignol. *L'Écho de Paris littéraire illustré*, 28 April, Paris, 1893.
4. *Jarry, Alfred,* Gestes et opinions du Docteur Faustroll, pataphysicien. II, viii. Paris, Gallimard, 1980.
5. *Ангаладян Рубен,* От Армянина через 89 лет, «Анив» №5, 2009.
6. *Brecht, Bertolt,* Dialogues d'exiles. Paris, L'Arche, 1956 (Translators: Baudrillard, Jean, Gilbert Badia.)
7. *Brooker, Peter,* "Key Words in Brecht's Theory and Practice of Theatre", 1994.
8. *Weiss, Peter.* La Persécution et l'assassinat de Jean-Paul Marat: représentes par le groupe théâtral de L'hospice de Charenton sous la direction de Monsieur de Sade: drame en deux actes. (Translator: Baudrillard, Jean). Paris, Seuil. 1965. *Weiss, Peter.* Discours sur la genèse et le déroulement de la très longue guerre de libération du Vietnam: illustrant la necessité de la lutte armée des opprimés contre leurs oppresseurs ainsi que la volonté des États-Unis d'Amérique d'anéantir les fondements de la révolution. (Translator: Baudrillard, Jean), Paris, Seuil, 1968.
9. *Mühlmann, Wilhelm E.* Messianismes révolutionnaires du tiers-monde. (Translator: Baudrillard, Jean), Paris, Gallimard, 1968.
10. *Lefebvre, Henri,* Critique de la vie quotidienne, Paris, 1947; *Lefebvre, Henri,* Le Droit à la ville. Paris, Anthropos, 1968; *Lefebvre, Henri,* La production de l'epace, Paris, Anthropos, 1974.
11. *Barthes, Roland,* Système de la mode. Editions du Seuil, Paris, 1967 (*Барт Р.*, Система Моды, Статьи по семиотике культуры, М., Издательство им. Сабашниковых, 2003).
12. *Baudrillard Jean.* Le système des objets. Paris, Gallimard. 1968. (*The System of Objects*, London: Verso, 1996.; *Бодрийяр Ж.,* Система вещей. М.: 2001).
13. *Մարջանյան Արա, RAND* կորպորացիան և մենք. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #3(31), 2010թ., էջ 14-45: *Марджанян А.*, Корпорация *RAND* и мы: Армяно-турецкие взаимоотношения, НОФ Нораванк, «21-й ВЕК», #2(18), 2011г.
14. *Baudrillard Jean. Simulacres et Simulation.* Paris, Coll. Débats. Galilée. 1981. (Simulacra and Simulation, Ann Arbor: The University of Michigan Press. 1994.; Simülakrlar ve Simülasyon, Doğu Batı Yayınları, 2003).
15. *Jameson, Fredric*, Postmodernism or the Cultural Logic of Late Capitalism. Durham: Duke University Press, 1990.
16. *Buchanan, Patrick*, The Death of the West. St Martin's Press, 2002. (Смерть Запада. М.: Аст, 2003).
17. *Debord, Guy,* La société du spectacle. Paris, 1967. (The Society of the Spectacle, Zone Books 1995; *Дебор, Ги,* Общество спектакля. М.: «Логос», 1999).
18. *Марджанян Ара*, Наше будущее – глазами *NIC*, НОФ Нораванк, «21-й ВЕК», #3, 2009.
19. *Дьяков А.В.,* Жан Бодрийяр. Стратегии «Радикального мышления», Изд. С-Петербургского ун-та, 2008

20. *Taşpinar, Ömer,* The Rise of Turkish Gaullism: Getting Turkish-Aamerican Relaitions Right. Insight Turkey, v. 13, No. 1, 2011.
21. *Taşpinar, Ömer,* The Three Strategic Visions of Turkey. *Brookings Institution*, Center on the US and Eourope. March 8, 2011.
22. *Հարությունյան Գագիկ,* Ասենք Թուրքիան ներողություն խնդրեց, իսկ մենք ի՞նչ ենք անելու հաջորդ օրը. 22.04.201: http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5725
23. *Alexandre, P.,* L'Elysée en péril: Les coulisses de Mai 68. Fayard, Paris, 1969.
24. *Baudrillard, Jean,* D'un fragmnent l'autre. Ed. Albin Michel, S.A., Paris. 2001. (*Baudrillard, Jean*, Fragments: Conversations with Francois L'Yvonnet. London, Routledge, 2001. *Бодрийяр, Жан,* Пароли. От Фрагмента к Фрагменту. «У-фактория», Екатеринбург, 2006).